

բնութիւնը։ Ուզում ենք ասել որ պակասութիւններ երկու կողմերն էլ ունեն, բայց պակասութիւն մերկայանել չէ այն միամիտ երեսպակաւ մարտութիւնը, որ թող է տալիս պարծենալ սեփական տնտեսութեամբ, երեսպակելով թէ հարեանք իրանից աւելի տնտես է։ Ուր կը հասնէր, եթէ հայը՝ նկատի առնելով քաղաքակրթութեան ասպարէզում իրանից յետ մնացած ազգերը, սկսէր թունաւորվել այն մտքով, թէ իրան աշխատել, տքնել այլ ևս հարկաւոր չէ։ Մի աշխատող ժողովրդի համար դա խնդրաւորութիւն կը լինէր և ուրիշ ոչինչ։

ԳԱՂԱՔԱԳԼԻԻ ԸՆԴՈՒՄԻՆԻՆԸ ԵՐԵՒԱՆԻՄ

Երեւան, հոկտեմբերի 10-ին
Օձ... դիմակ ծածկողներ կային և այդ դիմակները բացվեցին՝ երևան հանելով հետաքրքիր դէմքեր։ Երեկ, հոկտեմբերի 9-ին, նշանակված էր նոր դուռային հերթական նիստ, որտեղ, ի միջի այլ հարցերի՝ քննութեան պիտի առնվէր նաև բաղադրական ուսուցիչ հարցը։ Գաղաքագրութեան վերջին քառամսեակում ստանում էր 2400 քուրդ-ի, սակայն չնորհիւ այն հանգամանքի, որ ներկայ մասնաւոր ձայնաւորների մեծամասնութեան կողմից ճանաչված ամենաարժանաւոր թեկնածուն՝ Ի. Մելիք-Աղամալեան, համաձայնվում էր իր տուրքը դնելու ամսական ուսուցիչ 5000 ր. եղած դէպքում, այդ պատճառով նախ քան քաղաքագրի ընտրութիւնը, դուռան, որպէս հերթական հարց, լրացնում խնդիրը։ Ցայսմովում են 5,000 քուրդուն հակառակորդներ, թերահաւատողներ դէպի անձնատիրութիւնը և տատանվողներ, թերթիկներով ուղում են իմանալ ընդհանուր տարաձայնութիւնը և 41 ձայնից 5,000 քուրդու կողմը եղան միմիայն 19 ձայն։ Նախապատրաստական ժողովներում միաձայն երկու անգամ պատգամաւորութիւն ուղարկողները այս անգամ ուրիշ կերպ էին խոսում։ Երկու տեսակ պատճառներ էին առաջ բերում, նախ՝ որ պ. Մելիք-Աղամալեանի երկու անգամ եղած պաշտօնական դիմումներին տուած մերժումը հանդէպ՝ անհաստատ էին համարում մասնաւոր խոստումը, և երկրորդ՝ որ նախնական վարչութիւնը կարող է չը հաստատել 5000 ր. ուսուցիչ հարցը։ Բայց բանից երեսը, որ շարժառիթն ոչ թէ այս պատճառներն էին, այլ մի այլ հայելու ներկայ ձայնաւորներից աւելի քան 5 հոգի ախորժակ ունեն քաղաքագրի դուռնալու և իւրաքանչիւրն ունի մի քանի կողմնակիցներ, որանցից նոյն իսկ 2-ը և ոչ մի կողմնակից։ Դրանք շատ լաւ գիտէին, որ պ. Մելիք-Աղամալեանի կանոնադրութեան դէպքում իրանց յայտերը ջուրն են ընկնելու, այդ պատճառով հարկաւոր էր նրան հեռացնել մէջտեղից, իսկ այդ նպատակին հասնելու համար պէտք էր 5000 քուրդու հարցը մեղացնել, չը նայած որ նախապատրաստական ժողովներում այդ որոշված էր։ Անս այսպիսի պատճառները վերացնելու համար հարկաւոր էր ամենից առաջ պ. Մելիք-Աղամալեանի համաձայնութիւնը դրսուր կերպով, մասնաւոր որ ընտրվելու ախորժակ ունեցողները այդ օրն ուղում էին ուսուցիչ հարցը վերացնել, պնդելով, որ Մելիք-Աղամալեանը հրաժարվել է և մասնաւոր խոստման չը պէտք է հաւատալ։ Հազիւ հընար եղաւ ժողովի շարունակութիւնը թողնել յաջորդ օրվա։ Եւ այսօր պ. Մելիք-Աղամալեանից՝ նրա կողմնակիցները ներկայացրին, նախադասի անուշով, գրաւոր համաձայնութիւն՝ թէ պէտ այս անգամ էլ փորձեցին ֆինանսական արդիւններ առաջ բերել, սակայն միւս կողմն էլ ժողովացից արեց ուղարկել կազմած նախահաշի մէջ լինելից փոփոխութիւնների վրա և առաջարկեց ընդունել 5,000 ր. ուսուցիչ։ Այս հարցն անցաւ 28 ձայնով ընդդէմ 9-ի։ Այժմ այս վճիռը պէտք է հաստատվի վարչութեան կողմից և ապա կը նշանակվի ընտրութիւն։

Ա.—Գ

ՆԱՄԱԿ ՆԵՐՔԻՆ-ԱՍՏԱՑԻՑ

Հոկտեմբերի 10-ին
Նոր-Բայազէտի նախկին գործակալի օրով, երբ Բարաչիչի բարեկարգչի պաշտօնը յանձնված էր այս և այն տեղերին, իբրեւ գործակալի օգնականի, շատ աշխատեց զեղծումներ տեղի ունեցան և ապօրինի գործեր կատարվեցին։ Բանն այնտեղ հասաւ, որ ժողովրդի կողմից բողոքներ արվեցին հոգևոր իշխանութեան և քննիչ Բ. Վ. Ապրիլյանի զանազան խնդրանքները ապա ապօրինի գործողութիւնները երևան հանեց հաստատ փաստաթղթեր ձեռք բերելով քննութեան միջոցին, որից յետոյ բարեկարգչին իր պաշտօնից զրկվեց, ի հարկէ իր օգնականների

հետ միասին։ Թէ ինչ տեսակ «գոլումիստներ» էին այդ թղթերը, կարելի չը կայ նկարագրելու, միայն կասնք, որ նրանցից մի քանիսը չին, անպէտք պատկի անդորրաբեր էին, որոնք սովորաբար տարիներով և նոյն իսկ տասնեակ տարիներով հաւաքված մնում են այս և այն գիւղական պատկով քահանայի մօտ և որոնց տարեկանը դանակով բերելով՝ նոր տարեկան են գրում և այնպէս անցկացնում՝ «ի փառս իրանց գրգռման»։ Որպէս զի այլ ևս ևս այդպիսի գեղծումներ չը լինեն, Նոր-Բայազէտի նոր գործակալ Մատթէոս վարդապետը բարեւոյ համարեց անձամբ մտնել ժողովրդի մէջ և վարել Բարաչիչի մասի բարեկարգչութեան գործը։ Եւ անս այդ առիթով բարեկարգչի վարդապետը դարձիւ այստեղ՝ Ներքին-Արտաքին մնալու է մի-երկու ամիս, մինչև որ վերջացնի իր տեսչութեան յանձնված բոլոր եկեղեցական գործերը։ Բարաչիչի միտք է, որովհետեւ գիւղացին միանգամայն գործ կունենայ իսկական գործակալի հետ և ոչ թէ նրա օգնականի կամ աւելի լաւ է ասել՝ հաւատարմատարի հետ, որոնք դանդաղ խաղեր են խաղում ժողովրդի գլխին... Բացի դրանից, բարեկարգչութեան մի մասը սրան նրան յանձնելով՝ մի կողմից մէջտեղ աւելի է տուժում գիւղացին, որովհետեւ սրա տուածը պէտք է լինի թէ գործակալին, թէ օգնականին և թէ նրա հաւատարմատար-գործակալներին։ Իսկ միւս կողմից ժողովրդից ստացած պատկաւորում 6—8—10 ր. դուռնալով մինչև իր տեղը հասնելը յաճախ հաշվում է և մնում 3—4—5 ր. միայն, հետագայ և մնալովում է հոգևոր իշխանութեան գործադրող։ Ցանկալի կը լինէր, որ Մատթէոս վարդապետը մի ընդհանուր կոնտրոլ ևս ունենար Բարաչիչի մասի եկեղեցապատկան գործերին վրա, որոնք թէև մուրհակներով տրված են այս և այն անձին՝ իբրեւ տոկոսով, բայց իսկապէս այդ գործակալները ոչ թէ տոկոս չեն բերում, այլ զբաղեցնում են իրենց, երեք-չորսերի անհոգութեան պատճառով, իրանց տան տարվայ վաղեմութիւնը կորցնելու վրա են։ Մենք գիտենք գիւղեր Բարաչիչից, որոնց եկեղեցու անուշով հազարներ կան, բայց եկեղեցին չարուսակվում է պաշկի անշուք դրութեան մէջ, շատերում նոյն իսկ վաւերում ժողով է գումարում, դեռ չենք խօսում այն խարխուլ եկեղեցիների մասին, որոնք ծակ առատադնեւում ու ճեղքում անհոգի պարծենում են փող դալ։ Դրանց ծխականները պարծենում են, որ ունեն եկեղեցիներ, գուրկ չեն աղօթատանի, ուր օրը երեք անգամ յաճախում են, չեմբուռանք կերպով աղօթում են, ծուր դնում, երեսը քաբեկատակին բռնում... սակայն իրանց հերթին չեն ամալում կրանք այդ հիմնարկութեան տարիներով ինչպիսի կոպէսներ...

Գ. Ս.

ՆԱՄԱԿ ՍՂԱՆԻՑ

Հոկտեմբերի 9-ին
Տխուր պատկեր է ներկայացնում մեր քաղաքային ինքնավարութիւնը։ Ամբողջ երեք տարի է անցել այն օրից, երբ մեր քաղաքում հաստատվեց ինքնավարութիւնը. բայց այդքան տարիների ընթացքում նա մեզ ոչինչ օգուտ չէ տուել, ոչինչ չէ արել... Եւ, արդարեւ, ինչու համար է մեր ինքնավարութիւնը։ Միթէ նրա համար, որ անվերջ մասնավոր մնայ անգործութեան։ Մենք բոլորովին հեռու ենք այն անխիտ կարծիքից, թէ քաղաքային ինքնավարութիւնը աւելորդ է մեզ համար։ Այլ, ընդհակառակը, նա մեզ կարող էր տալ մեծամեծ բարիքներ, եթէ գործին գլուխ կանգնած լինեն բարեխիղճ և ինչպէս մարդիկ։ Գաղաքը հազար ու մի կարելի ունի, բայց ոչ է նրանց մասին մտածողը։ Չունենք անգամ կանոնաւոր լուստարութիւն, որ գիշերները ապահով կարողանային փողոցներով անցնել։ Երկրորդ տարին է, ինչ որ քաղաքի ձայնաւորները վճռել են 80 հատ լապտեր աւելացնել՝ քաղաքի լուստարութիւնը բարելւելու համար, բայց մինչև հիմա ի կատար չէ անված այդ։ Եւ ուն ևս սպասում, կամ թր օրվայ համար են ուղում լապտերներ պատրաստել։ Ինչ փոխ, որ քաղաքը չունի հիւանդանոց, դեղատուն, բաղանիք, հասարակական արտադրողներ, մաքուր փողոցներ։ Մեր քաղաքի զեկակարները նպատակը՝ չենք իրանց հաստատվելու առաջին օրից պէտք է լինէր նորանոր աղբիւրներ գտնել՝ քաղաքի եկամուտը աւելացնելու համար։ Բայց նրանք այդ չարին։ Գաղաքը, իր 11 հազարից աւել բնակիչներով, կարող էր բաց անել դեղատուն, որից ներթափան և բարդական մեծ օգուտներ կը բաւանար համ լնքը, համ էլ աղքատ ազգաբնակչութիւնը՝ մատակարարելով նրանց ձրիապէս դեղեր։ Մինչև հիմա չը կարողացան բաց անել այդ

ամեն կողմից օգտակար հիմնարկութիւնը, դոնէ հիմա աշխատեն։
Հոկտեմբերի 5-ին դուռնալի նիստ էր նշանակված. մտնում էր դահլիճ, երկու ձայնաւորներից դատ ուրիշ ոչ ոքի չէր տեսնում։ Ձայնաւորները հրաւիրվում են դարձաւ չեն դալիս և, ինչպէս միշտ լինում է, նիստը յետաձգվում է։ Իսկ եթէ հաւաքվում են՝ ոչինչ չեն չինում, սուս ու փուս նստած՝ նայում են միմեանց, թէ ինչ կասեն։ Եւ եթէ նրանցից մէկը քաջութիւն ունենայ և մի բան ասի՝ ամենքը կը համաձայնեն, իսկ յետոյ նիստը փակվում է... Միակ անձնատիրութիւնը, որ հասկացող է քաղաքային գործերի մէջ՝ դա պ. Ա. Շահվերդեանն է, բայց, տարաբաղդաբար, չը գիտենք ինչ պատճառով, նա էլ ներկայացրել է հրաժարական։ Եթէ մեր ձայնաւորների մէջ գնի 3—4 հոգի բարեխիղճ ու քաղաքի շահերին նուիրված անձինք լինէին, համովված ենք, որ այդպիսի մեծեկային անշարժութիւն չէր տիրի մեր ինքնավարութեան մէջ։

Մ. Ե.

ՆԱՄԱԿ ԽՐԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, հոկտեմբերի 13-ին
Այն օրից, որ «Հանդէս Ամսօրեայ» երևան հանեց «Տարալի» նորայն կրէններին՝ ժամանակակից կուլմներ «տաղանթներ» գաղտնիքը, մեր մանկական ամսագրի յաւելումը շարաթիւթի Միլիթարեան միաբանութեան դէմ մի բռնած արշաւանք է սկսել, որը մանկական ինչպէս հեռուստէլ բարձրանալով հասաւ վերջապէս փողոցային (№ 39), այնպէս որ հրատարակչին այժմ կարող է ապահովալիս դիմել Վիեննայի իր ծանօթ երգչուհու օգնութեան՝ հաստատելու համար, որ ոչ թէ միայն «Տարալի» պատկերներն աւելի գեղեցիկ են քան թէ Վիեննայի գեղարուեստական թերթերի նկարները, այլ իր «մակերեսութեան» հրապարակախօսներով էլ նա գերազանցում է բոլոր իր «collegues»-ներին։
«Տարալի» վերջին համարում տպած երկու փորձիկ յօդուածներն մէջ մենք գտնում ենք հետեւեալ՝ «մաքուր հրապարակախօսութեան» գոհարները՝ Միլիթարեան ձայերի հաւցելն ուղղած. «Միլիթարեանները (Վ. Պօլսի) վարժարան... անկասկած ունենալով է գուտ կրօնական կաթիլիկական ոգի և մի փառաւոր միջոց է լինելու պատրիարք Աղաբանի ձեռքից...» «Միլիթարեանները շարունակ մաքաւում են գիտութեամբ... դէմ... թէ Վիեննայի թէ Վիեննայի Միլիթարեանները... միակ նրա պատակն է բոլոր ձայերին դարձնել կաթիլիկ պապերի ստրուկներ...» Բիտուլիւնը, գրականութիւնը, պատմութիւնը և ամեն ինչ կաթիլիկ հայերը այլ չեն դալիս և են իրանց յետին մտքերի համեմատ... Բայց բաւական է Charta non erubescit, ասում է լատինական առածը, այլ ինչ թուղթ էլ կը կարծում, ամեն ինչ ուսումն է, մանաւանդ պատկերապարզ «Տարալի» թուղթը...
«Տարալի» յօդուածագիրը խօսում է Վիեննայի Միլիթարեանների Վ. Պօլսի վարժարանի մասին, առանց դադափար իսկ ունենալու այդ կրթական հիմնարկութեան վրա և անմիջապէս վճռում է, թէ այդ վարժարանը «անկասկած ունենալով է գուտ կրօնական ոգի և փառաւոր միջոց է լինելու պատրիարք Աղաբանի ձեռքից...» Այդպէս կարող են խօսել միայն նրանք, որոնք իրանց թիկն հեռու տեսնել չեն կարող, բայց յանգրդում են դատել իրանց անձնով իրեն մասին՝ կամ իրեն կըրել հակառակորդ և կամ իբրեւ կանխակալ կրօնաւոր (ինչպէս յայտնի է՝ ամեն կրօն ունի իր մարտնչողները)։ Միլիթարեանների Վ. Պօլսի վարժարանը, որի մասին յայտարարութիւններ տպուեցին «Մշակ» մէջ, արդէն 40 տարեց ի վեր գոյութիւն ունի։ Նրա աշակերտների մեծ մասը կաթիլիկներ էին և են, բայց կան նաև լուսաւորչականներ։ Իբրեւ շատ մօտ ծանօթ այդ վարժարանին, կարող ենք վստահացնել, որ նա երբեք զուտ կրօնական կամ կաթիլիկական ոգի չէ ունեցել և ոչ էլ Աղաբանի պատրիարքի դուռնալը դարձել, այլ նա տուել է միջնակարգ ուսում՝ ժամանակի պահանջի համաձայն։ Իսկ այժմ երբ վարչութեան ղեկն անցել է Վիեննայի Միլիթարեանների յայտնի երկրասարդ ոյժերի ձեռքը, վարժարանը՝ իր գերմանական ղեկավար գիմնազիայի ծրագրով, անշուշտ աւելի բարեկարգ վիճակի մէջ պիտի աւաղանայ և Վ. Պօլսի աղաքային ուսումնարանների շարքում առաջնակարգ տեղ պիտի գրաւէ։ Այս մասին «Բիւրակի» յայտնված ուրախութիւնն ու յոյսերը կատարեալապէս իրաւացի են։ Թող ապահով լինի «Տարալի»։ Միլիթարեանների կրթած աշակերտները շատ հեռու են իր կարծած զուտ կրօնական ոգով տոգորված լինելուց։ Միլիթարեանների սաները՝ նրանց որ վարժարանում էլ որ դատարարակված լինեն, միշտ մնում են լուսաւորչական լուսաւորչական, կաթիլիկ կաթիլիկ և ընդհանրապէս բոլորն էլ աղգային ոգւով տոգորված։ Այս իրողութիւնն այնքան հարաւանսով է, որ օրինակներ բերելու հարկ չենք տեսնում. մեր խօսքը կամ մեր կողմից մասին չէ ի հարկէ։
Գալով Աղաբանի պատրիարքի ձեռքին փառաւոր միջոց լինելուն, այդանոր բաւական լինի ասել, որ թէ Վիեննայի և թէ Վիեննայի Միլիթարեանները իրանց բոլոր վստահութեան

րով և վարժարաններով, չեն ենթարկվում Վ. Պօլսի հայ-կաթիլիկներին պատրիարքին և գործում են անկախ։ Նրանք են ծրագրում և վարում իրանց կրթական հիմնարկութիւնները՝ հաստատութիւն ընդունելով միայն իրանց մայր վանքերից՝ Վիեննայից և Վենետիկից, ուստի երբեք Աղաբանի պատրիարքի ձեռքին գործիք չեն եղել, և չեն էլ ուղենայ լինել, նոյն իսկ երբեմն, տեղ-տեղ, արգելքներ էլ են հանդիպել այդ կողմից... Միլիթարեանները Վ. Պօլսու կամ գաւառներում առաջնորդական կամ հովաական պաշտօններ ընդունում են միայն այն ժամանակ, երբ պատրիարքն ինքն է խնդրում և երբ մայր վանքն իրաւունք է տալիս. բայց կարող են ապահով լինել «գիտութեան և դրական փիլիսոփայութեան» անունից խօսողները, որ Միլիթարեանների հովութեամբ ոչ գիտութիւնը, ոչ փիլիսոփայութիւնը և ոչ մանաւանդ ազգը, ոչինչ չեն կորցնի, այլ գուցէ և ընդհակառակը։ Միլիթարեան միաբանը՝ ուր որ էլ լինի, միշտ հաւատարմում է մնում իր հիմնադրի դրօշակին, որի վրա անբաժան և անշփոթ գրուած են լինում «Ազգ և Արօն»։ Բայց գուցէ «Տարալի» յօդուածագիրը կը կամենար որ Միլիթարեան հովաները ջանքեր գործ դնէին բողոքականութեան տարածման և չը մաքաւէին դրա դէմ, կամ թէ չէ՝ յանձն առնէին կատարել այն, ինչ որ հայ լուսաւորչական կղերի անմիջական պարտականութիւնն է կատարելը... Այդ կը նշանակէ պահանջել, որ Միլիթարեանները լինեն plus royaliste que le roi... Եւ վերջապէս այդ ինչ տեսակ նախապաշարված միլիթարեանութիւն է—այս վերջին 3 տարվայ մէջ 40,000-ի չափ հայեր մասնագրականութիւն ընդունեցին, իսկապէս կտրուել իրանց կապը հայոց եկեղեցուց և հայ ազգի հետ, և դեռ այսօր էլ Պարսկաստանում (Արմինի կողմերում) թրքախօս լուսաւորչականները ամբողջ գիւղերով դիմում են խալաութեան, անպաւանալի կերպով կորչում ոչ միայն հայութեան, այլ նոյն իսկ քաղաքակիրթ մարդկութեան համար, և մեր այդ մեծագույն եկեղեցաւոր, ազգապէս և այլն պարտները անվրդով քնած են իրանց ականջի վրա, իսկ երբ նոյն անտէր, անօրհնական և հայաժողով ժողովրդից տանք դիմում են հայ-կաթիլիկ եկեղեցու փառալը, իսկողն վստահութեամբ, գուռում, դուռում են բարձրացնում և լուսաւոր չէ մնում, որ չը լծափեն, հայութեան գործին իրանցից շատ աւելի վերջին ծառայած անձանց վրա։ Թող նոյն երբ, որ փոքր ինչ առողջ դատողութիւն և բարեխիղճութիւն ունեցող ընթերցողն ինքը մտածէ այս մասին։ Միլիթարեան Միաբանութիւնը իր երկու դարեալ գոյութեան միջոցին այնքան երախտաւորապէս իրաւունք է ձեռք բերել, որ այժմ զանազան փողոցային թերթի կամ կրօնամիտների կողմից նրանց դատաւորեան և նրանց գործունէութեան դէմ ուղղված լրբիւր յարձակումները միմիայն արհամարհանք են արժանի։ Իսկ «կաթիլիկ պապերի ստրուկները» միայն նոյնպէս կարող են զգալ «Տարալի» խաւարամիտների հայտնաբերումը։
Վիեննայի և Վիեննայի Միլիթարեանները, թէ մեզ մօտ և թէ ամբողջ քաղաքակիրթ աշխարհում գործնականապէս յայտնի են եղել իբրեւ հայկական ուսման ներկայացուցիչներ։ Երօղայում և իբրեւ երօղայական ուսման տարածողներ Արեւելքում, նրանք իրանց բազմաթիւ և կորուստի ճիւղաներից ապառաժ դատական հրատարակութիւններով և կրթական հաստատութիւններով ամբողջ սերունդներ են գործիչներ կրթել և կրթում են հայ ողով, վերջապէս նրանք դեռ մինչև հիմա էլ հայոց միակ լուրջ և օտարական աշխիւ պարծենի արժանի ուսումնական հիմնարկութիւնն են կաղում, իսկ «Տարալի» գրչակները իրանց ժամանակաւոր խմբագիր և salto mortale-ին սովոր Արաբստանի հայտնաբերումը միասին մտել են Մօլէրի Արաբստանի մօլէրի մէջ, և բաւում են—nous avons changé tous cela... Ողորդել մարդիկ։

Ա. Ս.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՆԵՐ

Մեզ հայորդում են Պարիզից հոկտեմբերի 1/13-ից. «Պարիզի հայ ուսանողաց ակումբը», առաջիկայ կիրակի օր, հոկտեմբերի 4/16-ին, Պարիզի հայ գաղթականութեան մատուռին մէջ, հոգեհանգիստ պիտի կատարէ հանգուցեալ վիպաւոր Քաջատուր Արտիմանի յիշատակին, նրա մահվան 50-ամեայ տարեդարձի առիթով, և «Մշակ» լրագրի հրատարակիչ պրօֆէսոր Անդրէաս Արծրունու յիշատակին։

Վովկանան կառավարչապետ իշխան Գօլցին, այցելելով այգեգործական ցուցահանդէսը, հրաւիրել էր այգեգործական ժողովի անդամներին այցելելու պալատի այգին։ Ժողովի անդամները ուրախութեամբ ընդունեցին այդ հրաւերը. նրանց ընդունել ինքը կառավարչապետը և ապա հանգիստականներն անցան դէպի այգին և մանրամասնաբար ծանօթացան տնակերի, ծաղիկների և պտուղների հետ։

Երեկ, հոկտեմբերի 14-ին, Կայսցաւ Քիֆլիսի քաղաքային դուռնայի արտակարգ նիստը, որը հրաւիրված էր Քիֆլիսի նահանգապետի առաջարկութեամբ, ընկելու բերդական Անձիմ ընկերութեան ղերկետօր Բօրիի նոր պայմանները

ձիւրաշէր մասին: Կարողացիւ ռազմական ան-
գամ Արեւմտեան Արդարադատութեան Կար-
ծիքը, որ առաջադրուած է Բոքսի առաջարկած
նոր պայմաններէն անշահաւէտութիւնը քաղաքի
համար: Քննելով այդ պայմանները, նա գրա-
նուած է, որ նրանք աւելի աննպաստ են, քան
Փրանկո-բելգիական ընկերութեան ներկայացու-
ցիլ Պոլի պայմանները: Բոքսի առաջարկում է
քաղաքին կէս միլիոն րուբլի, որ 15 տարուց
յետոյ կանխ մօտ 700,000 րուբլի մինչդեռ Պոլի
տալիս է 15 տարուց յետոյ 800,000 րուբլի: Բո-
քսի երեքտարականութիւն մտնելու համար վերջ-
նում է դրամագլխից 6 տոկոս, մինչդեռ այժմ
հեշտութեամբ կարելի է փող դնել աւելի էժան
տոկոսով: Բացի դրանց քաղաքի համար չէ
լուծվում ձիւրաշէր յետ գնելու հետ կապված
թիրիմացութիւնը, և եթէ այսօր քաղաքն ստիպ-
ված է դատարանի միջնորդ պարզել իր վճա-
րումները քանակութիւնը, նոյնը պէտք է աւելի
և տասն հինգ տարուց յետոյ, աւելի ծանր հան-
գամանքներ մէջ: Դրաման, 49 ձայնով 10-ի
դէմ՝ մերժեց Բոքսի առաջարկը:

Մեզ հաղորդում են, որ դերասան Գ. Պետրո-
սեան հրաւիր է ստացել Տաղանդոտի մասնակ-
ցին այդ քաղաքի ռուսաց ներկայացուցիչին:
Միթէ ուրեմն Բազուի հայոց թատրոնը մինչև
այժմ չը կարողացաւ համաձայնութիւն կայա-
ցնել և լիով չը տալ, որ հայոց՝ առանց այն էլ
փորձարթի բեմական ոյժերը ցիր ու ցան լինին:
Այնքան է այդ անհամաձայնութեան պատճառը,
— արդեօք մի քանի րուբլիների հարցը, թէ որ
և է սե խտրիզա, որից ոչ մի նայկական ձեռ-
նարկութիւն ազատ չէ կարողանում մնալ...

Մեր խմբագրութեան մէջ ստացվեց Ս. Միր-
զայեանցի յօդուած «Քաղաքի մշակութիւնը»
գրքովը, որ ստված է Վաղարշապատում, էջ-
միածնի տպարանում: Բոչոյի կազմող օգուտի
է մասնագիտական գրականութեան մէջ եղած
տեղեկութիւններից և տեղական դիտողութիւն-
ներից: Գրքովը բաղկացած է 84 երեսից և ար-
ժէ 20 կոպէկ: Ցանկալի է, որ գործնականապէս
բաժնակի վրադրուներ յայտնէին իրանց կար-
ծիքը պ. Միրզայեանի գրքի մի քանի կէտերի
մասին, ինչպէս է, օրինակ, ցանքաշրջանի կամ
սերմնափոխութեան դուրսը, որ պարունակում է
իր մէջ նոր առաջարկութիւններ, որոնք դեռ
չեն փորձված Անդրկովկասում:

Այսօրվանից սկսած Անդրկովկասեան երկա-
թուղու գնացքների ժամերը փոխված են: Ման-
րամասնութիւնները ընթերցողը կը գտնի յայ-
տարարութիւնների բաժնում:

Թէ՛ԼԱԽԻՑ մեզ գրում են հոկտեմբերի 10-ից,
եթե օր առաջ մեր խաղող քաղաքացիներից
մէկի տունն է մտնում Թելախում տխուր հռչակ
վայելող մի պարոն, որ մի քանի ժամանակ ա-
ռաջ այդ տնից վտնված էր իր զօն-ժուռնա-
կան հակումների համար: Տղամարդիկ բացակայ
էին այդ միջոցին տնից և ուրեմն օրերով դու-
րութիւնը վտանգաւոր: Մի կերպ իմաց են տա-
լիս հարևաններին, որոնք վազում են օգնու-
թեան: Դաւառացի Դօն-ժուռնան շտապում է իր
զուտի փրկելու և դիմելով տան պատշաճաբը՝
փորձում է այդտեղից փողոցը լինել, բայց սաս-
տիկ չփութութիւնից հաւասարակշռութիւնը կորց-
նելով, երկրորդ յարկի պատշաճաբից ցած է
զորվում փողոց և կողքեր ջարդում: Վրա են
հասնում հարևանները երկու տղամարդ և ար-
դէն իր պատժը ստացած թշուառին սկսում
են սաստիկ գանակոծել: Խեղճ Դօն-ժուռնան
հազիւ կենդանի՝ կառքով տանում են բժշկի մօտ:
Ասում են, որ ստացած վէրքերը խիստ վտան-
գաւոր են: Դօն-ժուռնաներին պատժել մեղք չէ,
բայց ընկաձիւն պատժելը և այն էլ այդպիսի
բարբարոսութեամբ՝ յատուկ է վայրենի ինս-
տիտիւններով հարուստ ասիացիներին միայն:

Թէ՛ԼԱԽԻՑ մեզ հաղորդում են. «Թէ՛Լախն կը-
պած Կուրդկալուսի դիւղում այս օրերս մի
սպանութիւն պատահեց: Գիշերը եօթ հոգի մը-
նում են տեղացիներից մէկի այգին՝ խաղող գո-
ղանալու: Այգեպանը, որ միաժամանակ և զիւ-
րային հակողի պաշտօն էլ էր կատարում, նկա-
տելով գողերի ներս մտնելը՝ արձակում է հրա-
ցան և գողերից մէկին տեսնու ու տեղը սպանում:
միւսները փախչում են: Այդ սպանութեան
համար այգեպանը սաստիկ զղում և լաց է լի-
նում:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԻՍԻԱՅԻՑ

Կ. Պօլիս, սեպտեմբերի 28-ին

Կարծեմ համառօտ տեղեկութիւն մը տուած
էի ձեզ բուլղարներու նորաշին եկեղեցիին վրայ,
որ կառուցուած է մայրաքաղաքի Փանար ու
Պալատ կոչուած երկու արուարձաններու միջև:
Ս. Ստեփաննոս անուամբ: Վերջերս այս եկեղե-
ցիին օրհնութեան մեծահանդէս արարողութիւնը
կատարուեցաւ. բնդ նախագահութեամբ էկզար-
խիւն, որ իր շուրջն ունէր ինչը մետրօպոլիտ և
բազմաթիւ արխիմանդրիտներ:

Բուլղարապէս ու Մակեդոնիայէն բոլոր երե-
ւելներն եկած էին՝ ներկայ գտնուելու օրհնու-
թեան այդ փառահեղ հանդէսին հոյակապ եկե-
ղեցիի մը, որ մայրաքաղաքի մէջ գտնուած ա-
մենայն գեղեցիկ և մեծակառուց եկեղեցիների
միջև է՝ կաթողիկէի ձևով, որուն պլանապոյն
երկաթէ կապերը, սիւներն ու գմբէթները ձու-
լուած են Վիկտոր Վալտերի գործարաններուն
մէջ: Սիւները զարդարուած են վարդագոյն մար-
մար պղաքն երոպ, և խաչկար բարձրացած է
հիւսնայի գեղեցիկութեամբ՝ բիւզանդական ձա-
շակով: Եկեղեցին փառաշարժուած է խիստ
նորը պատկերներով, որոնց մի քանիսն են,
մասնաւոր Ս. Կուսի Աւետման պատկերը՝ կը
միջնեմն այն անուշիկ դէմքերը, զոր խաղաղ
նշանաւոր պատկերահան Պրա Մանէլլօ միշտ ծըն-
դան վրայ եկած կը նկարէր: Բուլղարները շատ
կը պարծին իրենց այս նորակառուց եկեղեցիին
վրա, և ի պատիւ օրհնութեան հանդիսին դի-
ւուած խուռն բազմութիւնն ազգային ցոյցեր
ընելէ աւելի՝ իր ջերմեռանդութիւնը կարտա-
յայտէր:

Կառավարութիւնը սակայն բաւական չտոնե-
ցաւ, և ներկայ ամսոյ չորրորդ օրէն սկսեալ՝
արգելեց մուտքն այն մասնաւոր կառախուղներե-
րուն, որ բազմաթիւ բուլղարներ կը փոխադրէին
Սօֆիայէն մայրաքաղաք: Հանդէսին օրն ան-
գամ ռուսական շոգնաւառով մայրաքաղաքս հաս-
նող բուլղար և ուրիշ ճամբորդներ արգելուեցան
շոգնաւառն մէջ ու չի թոյլատրուեցան դուրս ել-
նել, իսկ եկեղեցիին շուրջը կը վիտային նոյն
օրն անհամար բռնիներ ու ծպտեալ ոստիկան-
ներ, ինչպէս և ձիւրու ու հետակ վիճակները,
որպէս զի մի քանի յոյներուն և բուլղարներուն
միջև, իրեն երկու իրարու անհաշտ թշնամի աղ-
գերու՝ ընդհարում մը տեղի ունեցաւ, բայց զի-
նուորական տոյն հակողութիւնը բնաւ չի վրա-
ւորեց ոչ բուլղարներուն ազգային հպարտութիւ-
նը, ոչ ալ յոյներուն անձնապիտրութիւնը: Այս
երկու ազգերն ալ, մասնաւոր այսպիսի դէպ-
քերու մէջ, խիստ լաւ գիտեն պահել իրենց պա-
տիւնը՝ առկի չի տալով անտեղի դժուարութիւն-
ներուն: Թէ բուլղարները և թէ յոյներն արդէն
լաւ գիտեն, որ սուլթանն արտօնելով այդ եկե-
ղեցիի շինութիւնը հանդէպ յունականին՝ մարիա-
վելական քաղաքականութիւն մը ի գործ դրաւ...
«Բաժանեմ զի տիրեցեալ» բաղադրականութիւն
մը՝ գրգռելու համար յոյներուն համբերութիւնն
ու երկաթամտութիւնն ընդդէմ բուլղարական աղ-
դին, բայց բարեբախտաբար որ և է դէպք չի
պատահեցաւ:

Մայրաքաղաքի մէջ բազմաթիւ մարդիկ կը
ձերբակալուին, որոնք պետական գանձէն մեծա-
քանակ պահանջներ և ամսական առնելիքներ
ուսնեալով կուզեն եղբւր ցոյց մ'ընել գանձային
պաշտօնէութեան առջև: Տէրութեան գանձն ար-
դէն երկար ատենէ ի վեր պարտաւ է: Կառա-
վարութեան պաշտօնեաներն ստակ մը չեն կա-
րող գանձել ի հաշի իրենց դիւղուած ամսական-
ներուն: Սա բրաֆն երբ, որոնք 50 առ հա-
բիր ջնջը մ'ընելով կը վճարէին պաշտօնեանե-
րուն ամսականները՝ խելով անոնց ձեռքէն
գանձային պաշտօնատուէն դուրս բերելով
ձարարները, հիմա չեն զննելիք նոյն իսկ 80
առ հարիր գեղջի: Ալ բոլորովին անտանելի
դարձած է իրաց այս վիճակը. գանձային պաշ-
տօնեաներն ալ բնաւ չեն միանար կարգադրու-
թիւն մ'ընելու այս տակալի և դժուղակ կացու-
թեան, որուն միակ շարժառիթն է եղած Վիլհէլմ
կայսեր ուղերթութիւնն ի թիւրբիս:

Մայրաքաղաքի ինչպէս նաև Եփեսոսի և
Երուսաղէմի մէջ խել մը արտաքին ցոյցեր պի-
տի լինին, տեսակ մը fantasmagorie, այսինքն՝
խաւարի մէջ լուսաւոր պատկերներ ի յայտ բե-
րող ցոյցեր՝ աչք շլացնելու համար, և սակայն
կազմ ծախքերն ամեն երեսակայութիւնէ վեր են:
Վիլհէլմ II-ի համար մասնաւորապէս կառույ-
ւած Քէօզկն, որոյ մասին գրած էի անցեալ
թիւից: Թիւնքի մէջ, բոլորովին արեւելեան
պերճանքներով սարքուած է: Հին լեցուած են
ամեն տեսակ մթերք, հին դիւղուած են այն դա-

նազան ակնախտի ընձաններն՝ որ պիտի մա-
տուցուին կայսերական սրբեցեալ հիւրին, և,
հին պիտի փողփողեն բոլոր այն ձօնութիւն-
ները՝ զոր «Հաղար և մէկ գիշերներու» հե-
ղինակը շողացուցած է իր վէպերուն մէջ:
Նորին կայսերական մեծութեան ի մասնաւոր
ծառայելու համար՝ նշանակված սպասորեա-
րին՝ յատուկ զգեստներ պատրաստուած են, ու-
կեթիլ գրգռելով՝ որոնց մէկ մէկը կարծէ
եօթը Ֆրանկ, իսկ այդ զգեստներուն համար
միայն, բացի զընդերքէն, 2,500 ոսմ. ոսկիէ
(21,000 րուբլի) աւելի ծախս գնացած է: Փո-
ղոցային շինութիւնները և ուրիշ կազմակերպու-
թիւնները մեծ փութով յառաջ կը տարուին
Պէրայի և ուրիշ զանազան պողոտաներու մէջ՝
որտեղեղէն կը յուսացուի կայսերական թափ-
րին անցնելը:

ՆԱՄԱԿ ՊԱՐԱԿԱՍՏԱՆԻՑ

Թաւրիզ, հոկտեմբերի 4-ին

Պրօֆէսոր Անդրէաս Արծրունու անսպասելի
մահը պարսկահայերի սրտերուն էլ վշտի ար-
ձագանք գտաւ: Մի շարքի առաջ մի խումբ
երիտասարդների խնդրով Արարատականի ա-
ռաջնորդ Սահակ եպիսկոպոս Սյվատեան՝ Բեր-
դաթալի և Լիւապի եկեղեցիների պատերի վրա
յայտարարութիւն կայցնել տուեց իր կողմից,
այսօր, կիրակի, հանդուցեալի համար հոգեհան-
դիստ կատարելու մասին: Բազմութեան ներկայ-
ութեամբ տեղի ունեցաւ հոգեհանգստի արարու-
թիւնը: Բերդաթալիս Ա. Աստուածածին եկեղե-
ցում, և թեմական եպիսկոպոսը խօսեց մի կարճ
ու իմաստալից քարոզ. համառօտ կերպով նկա-
րագրեց ինչպէս Արծրունիների ընտանիքի հայ
ժողովրդին մատուցած գնահատելի ծառայու-
թիւնները, այնպէս և պրօֆէսոր Անդրէաս Արծ-
րունու գիտութեան, հայ հասարակութեան ու
ազգին մատուցած ծառայութիւնը, և ապա դո-
ւեց ու օրհնեց հանդուցեալ գիտնականի յիշա-
տակը: Հոգեհանգստից անմիջապէս յետոյ ի դի-
մաց հայ հասարակութեան, առաջնորդ Սահակ
եպիսկոպոսը և բաւական թիւով ներկայ գտնու-
թիւնը ցաւակցական հեռագիր ուղարկեց «Մշա-
կի» խմբագրութեան: Ի դէպ. հոգեհանգստից
բիւ առաջ Արամեան ուսումնարանի տեսուչ
Սէքեանեանի կարգադրութեամբ՝ ուսումնարան-
ների աշակերտներն ու աշակերտուհիները եկե-
ղեցուց դուրս հանվեցին: Այս տեղը երկուշի
զուտիկ տպաւորութիւն թողեց առանց այն էլ
վշտացած հասարակութեան վրա...

Ով ծանօթ է Գրիգոր Արծրունու և Անդրէաս
Արծրունու դիտութեան և հայ գրականութեան
տուած ծառայութիւններին և առհասարակ Արծ-
րունիների ընտանիքի արդիւնաշատ գործունէու-
թեանը, ընկալանաբար խորը ցաւ պէտք է զգայ
այն մեծ կուրուստի համար, որ ունեցաւ գիտու-
թեան աշխարհի հետ հայ ժողովուրդը: Արծրունի
ընտանիքը, ճշմարիտ է, ոչ միլիոններ և ոչ կա-
լուածներ կտակեց ազգին, բայց նա թողեց մի
մեծ գանձ—«Մշակը», որ առաջ բերեց թարգ-
մանը, և տակալին շարունակում է իր գա-
ղափարի աշխուրդը, որին՝ համակրող հասա-
րակութեան հետ՝ ցանկանում ենք երկար կեանք:
Վերջապէս Գրիգորի հանգիստը լուծվեց՝ Բեր-
դաթալի ուսումնարանների հոգաբարձութիւնն
ընտրվեց՝ շնորհիւ այն եղանակին, որը գործ
դրեց առաջնորդ Սյվատեան եպիսկոպոսը: Ըն-
տրվեցին 6 արժանաւոր անձինք՝ ժողովրդից
տրված քուէների առաւելութեամբ: Լայպոս
է Թաւրիզի հայ հասարակութիւնը, որ նորընտիր
հոգաբարձութիւնը ի գործ կը դնէ իր էնէրգիան՝
կրթական և ազգային գործերի մասին:

W

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Նմէնի ապստամբութիւնը գնալով լուրջ
քննադատութիւն է ստանում: Ապստամբ արարնե-
րը բազմաթիւ խմբեր ունեն, որոնք մի քանի
անգամ յաղթել են նրանց դէմ ուղարկւած թիւրք
զորքերին: Թէ որքան մեծ է ապստամբական
շարժումը, երևում է նրանից, որ Նմէն են ու-
ղարկված 5000 զինուորներ ևս և թիւրքաց կա-
ռավարութիւնը մտադիր է կենտրոնացնել արտեղ
40 հազար զօրք, որպէս զի վերջնականապէս
խաղաղացնէ երկրը: Բացի ապստամբութիւնից,
թիւրքերը պիտի կռւեն և սովի դէմ, որ տիրում
է Նմէնում: Կառավարութիւնը օրական 250 ֆունտ
ալիւր է բաժանում, բայց դրանով սովաւանջ-
ների կէսն էլ չէ կարելի պահպանել մահաց:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ԲՈՒՍԱՅ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ

ՊԱՐԻՑ, 14 հոկտեմբերի: Երկու իրար յաջոր-
դող քուէարկութիւնից յետոյ՝ միմիայնութիւնը
փորձառամուրթիւն ստանալով՝ հրաժարական

տուեց: Տօր ընդունեց հրաժարականը, բայց
ինչոքեց ժամանակաւորապէս վարել գործերը:
Ծովային մինիստր Լօկուա Նշանակված է մա-
նակաւորապէս զինուորական մինիստրութեան
կառավարի: Պատգամաւորների ձայների բաժան
բաժան լինելու պատճառով՝ իրերի դրութիւնն
անորոշ է: Ենթադրում են, որ Բրիտանի յաջորդը
կը լինի Րիբօ: Փողոցներում և հրապարակնե-
րում համախմբումներ են լինում. քանի մի փո-
ղոցային ընդհարումներ տեղի ունեցան:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳԻ ԲՈՐՍԱ

Հոկտեմբերի 13-ին

Լօւիզօնի վրա 10 ֆունտ արծէ	93	բ. 65	կ.
Բերլինի վրա 100 մարկ	45	72 1/2	»
Պարիզի վրա 100 ֆրանկ	37	10	»
Պօլսկայի վրա	—	—	»
Մաքսային կուպոններ	—	—	»
Բորսային դիվիդենդ	5 1/2	6 1/2	»
4% պետական բէնտա	101	—	»
4% տեքստիլ փոխառութեան	101 1/2	—	»
4 1/2% գրու. թղթ. աղ. կալ. բանկ	96 1/2	—	»
4 1/2% վիպակ. գեղ. հող. բանկ	100	—	»
Ներքին 5% առաջին փոխառութ.	295 1/2	—	»
Նոյնը երկրորդ	259	—	»
5% գրու. թղթ. աղ. կալ. բանկ	219 1/2	—	»
5% պետական երկաթուղ. բէնտա	—	—	»
Պետեր. քաղ. կր. ընկ. օր. 5%	—	—	»
Մոսկովայի քաղաք. կր. օր. զաւարտել	100%	—	»
Օղեսայի	—	100 1/2	»
Թիֆլիսի	—	99 1/2	»
Թիֆլիսի կալ. բանկ 6%	—	—	»
Նոյնը	—	99 1/2	»
Փուլթաի կալ. բանկ 6%	101	—	»
Նոյնը	—	100	»

Խմբագիր՝ Ա.Լ.ԳՍԱՆԻՐ ԲԱՆԱԹԱՐ
Հրատար.՝ ԱՐԾՐՈՒՆԻ ԺԱՌԱԳՆԵՐ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԳՐԱՎԿԱՍՏԱՆ ԵՐԿԱՌՈՒՂԻ

Մ ա ռ դ ա տ ա ռ № 1 գնացքը դուրս է գալիս ԲԱ-
ԳՈՒԻՑ գէպի ԹԻՖԼԻՍ ցերեկայ 4 ժամին և 15 օրէկէն,
Թ Ե Ֆ Լ Ե Ս է հասնում առաւօտեան 8 ժամ 38 օրէկէն:
Դուրս է գնում ԹԻՖԼԻՍԻՑ գէպի ԲԱԹՈՒՄ առաւօ-
տեան 9 ժամ և 20 օրէկէն, Բ ա Թ ու Ս է հասնում
երեկոյեան 8 ժամ և 52 օրէկէն:

Մ ա ռ դ ա տ ա ռ № 3 գնացքը դուրս է գալիս ԲԱ-
ԳՈՒԻՑ գէպի ԹԻՖԼԻՍ ցերեկայ 10 ժամ 50 օրէկէն,
Թ Ե Ֆ Լ Ե Ս է հասնում երեկոյեան 5 ժամ և 9 օր-
էկէն: Դուրս է գնում ԹԻՖԼԻՍԻՑ գէպի ԲԱԹՈՒՄ և
երեկոյեան 6 ժամ 10 օրէկէն, Բ ա Թ ու Ս է հասնում
առաւօտեան 7 ժամին:

Մ ա ռ դ ա տ ա ռ № 2 գնացքը դուրս է գալիս ԲԱ-
ԹՈՒՄԻՑ գէպի ԹԻՖԼԻՍ առաւօտեան 8 ժամ 30 օր-
էկէն, Թ Ե Ֆ Լ Ե Ս է հասնում երեկոյեան 8 ժամ 30
օրէկէն: ԹԻՖԼԻՍԻՑ գէպի ԲԱԳՈՒ Ս է դուրս գալիս՝
երեկոյեան 9 ժամ 15 օրէկէն, Բ ա դ ու է հասնում
ցերեկայ 12 ժամ 59 օրէկէն:

Մարտագր № 4 գնացքը դուրս է գալիս ԲԱԹՈՒ-
ՄԻՑ գէպի ԹԻՖԼԻՍ ցերեկայ 8 ժամ 40 օրէկէն,
Թ Ե Ֆ Լ Ե Ս է հասնում առաւօտեան 9 ժամ 55 օրէկէն:
ԹԻՖԼԻՍԻՑ գէպի ԲԱԳՈՒ Ս է դուրս գալիս առաւօտեան
11 ժամ 20 օրէկէն, Բ ա դ ու է հասնում առաւօտեան
5 ժամ 42 օրէկէն:

Ձ դ ու շ ա գ է ք կ ե դ ժ ու մ ն եր ի ց
ԱՌՈՂՋԱՊԱՆԱԿԱՆ
ԲՈՐՆՈ-ՏԻՄՈՒԵԱՆ ՍԱՊՈՆ
Գ. Ֆ. Ի Ի Ր Գ Է Ն Ս
Ոչնչացնում է պղտորները, սևութիւնը, դե-
ղին բծերը, պոպոկները և պտուկները և
ներգործում է աւելցող ջրանշնչու դէմ: Խոր-
հորդ է տրվում ձեռք բերել, որպէս տուա-
լէտային անուշաճոտ սապօն, բարձր արժա-
նատրութեամբ:
ՈՍԿԷ ՄԷԻՍԼ 1893 թվին համար:
Կտրել գինը 50 կ.,

Типографія Грузинск. Издат. Т—ва, Лорисъ-Мелик. ул. № 13